

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2024-2025 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ 2միավոր
ա. ՀՀ տարածքում արոտային անասնապահությունը հանգեցրել է ժամանակավոր
բնակավայրերի ձևավորման:

բ. Վերջին տարիներին խոշոր եղջերավորների գլխաքանակը Հայաստանում նվազում է, սակայն
միջին կաթնատվությունը՝ աճում:

գ. Չնայած պտուղների և հատապտուղների արտադրության ծավալը Հայաստանում վերջին
տարիներին աճում է՝ միավոր մակերեսից բերքատվությունը նվազում է:

դ. Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում այգեգործության հիմնական գոտին
Հայաստանում տեղաշարժվում է ավելի ցածր նիշեր:

ե. Արվակուլտուրայի արտադրանքը զանգվածապես գերազանցում է վայրի ձկնորսությանը:

զ. Արվակուլտուրայի հիմնական գոտին համընկնում է բարեխառն գոտու ջրերի հետ:

է. Արվակուլտուրայով բացարձակ առաջատար են Չիլին և Պերուն:

ը. Ձկան որսով բացարձակ առաջատար է Չինաստանը:

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը 1միավոր
ա. էրոզիայի բազիս բ. էկոլոգիական թողք

3. Բնութագրով որոշել երևույթը 1միավոր
Այն երևույթը, երբ մի շարք սոցիալ տնտեսական և քաղաքական պատճառներով
բեռնափոխադրողները կարճ ուղիների փոխարեն այլընտրանքային, շատ ավելի երկար
ճանապարհով են տեղափոխում բեռները:

4. Ինչպե՞ս են կոչվում.
ա. Աննորմալ շոգ եղանակների ժամանակահատված, որը սովորաբար տևում է երկու օրից
ավելի: 1միավոր

բ. Հանքարդյունաբերական թափոնների թաղման նպատակով ստեղծված ջրամբարը: 1միավոր

5. Խնդիրներ
ա. Ա կետի կոորդինատներն են հս.լ. 52°; արմ.ե. 4°, իսկ Բ կետինը՝ հվ.լ. 12°; արլ.ե. 7°: Որքա՞ն է
երկու կետերի միջև տեղական ժամանակի տարբերությունը և որքա՞ն է Բ կետի տեղական
ժամանակը, եթե Ա կետի տեղական ժամանակը 15:32 է: 1միավոր

բ. Ճանապարհորդը, արլ. ե. 44° միջօրեականով 4440կմ շարժվելով հարավ, հասավ մի
գուգահեռականի, որի վրա մարտի 21-ի կեսօրին արևը զենիթում էր: Ո՞ր քաղաքից էր շարժվում
ճանապարհորդը, քանի՞ աստիճան հարավ շարժվեց նա, ո՞ր գուգահեռականի վրա հայտնվեց և
այդ գուգահեռականի երկայնքով հոսող գետը Կորիոլիսի ուժի ազդեցությամբ նախնական ուղուց
ո՞ր կողմ է շեղվելու: 1միավոր

**6. Ելնելով Իսպանիայի ՀՆԱ կառուցվածքի վերաբերյալ տվյալների շարքից՝ մեկ տրամագրում գծեք
տնտեսության ճյուղերի դինամիկայի կորերը (1միավոր) և պատասխանեք հարցերին:**

Տարեթիվ	1870թ.	1890թ.	1910թ.	1930թ.	1950թ.	1970թ.	1990թ.	2010թ.
	ՀՆԱ բաժինն ըստ տնտեսության ճյուղերի (%)							
Ծառայություններ	41	38	41	45	44	44	55	68
Արդյունաբերություն	21	28	31	32	27	43	37	29
Գյուղատնտեսություն	38	34	28	23	29	13	8	4

ա. Ո՞ր քանամյակում է գրանցվել Իսպանիայի արդյունաբերականացման ամենաբարձր տեմպը
և բնակչության տեղաբաշխման/տարաբնակեցման ի՞նչ գործընթացի է հանգեցրել այն: 1միավոր

բ. Ծառայությունների ոլորտի ո՞ր ճյուղը լուծեց Իսպանիայում ապարդյունաբերականացման
արդյունքում գործազրկության սուր խնդիրը 1990-2010թթ.: 1միավոր

7. **Դասավորել** նշված գետերն ըստ տարեկան տեղափոխած պլաստիկ նյութերի քանակի աճող հաջորդականության՝ Նեղոս, Ամուր, Յանցզի, Ինդոս 1 միավոր


8. **Բացատրել**

ա. Գյուղատնտեսական մթերքների արտահանմամբ հայտնի այնպիսի երկրներ, ինչպիսիք են Մեքսիկան, Մարոկկոն, Ալժիրը, Ավստրալիան և Իտալիան, վերջին երկու տասնամյակում զգալիորեն փոփոխել են արտահանվող և ներմուծվող գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը և հարաբերակցությունը ի օգուտ դրանց ներմուծման: Ի՞նչն է ստիպում այդ և մի շարք այլ երկրների հրաժարվել որոշ գյուղմթերքի արտադրությունից և կողմնորոշվել դեպի ներմուծում: 1 միավոր

բ. Աշխարհում հայտնի են հետադարձ կապի շղթաների բազմաթիվ օրինակներ: Այսպես, կլիմայի գլոբալ տաքացման արդյունքում տունդրայի մշտական սառածության գոտու հալքը նմանատիպ շղթայով հանգեցնելու է ջերմաստիճանների էլ ավելի աճին: Իսկ կարո՞ղ են արդյոք անտառային ինտենսիվ հրդեհները հանգեցնել ջերմաստիճանի լոկալ նվազման և ինչու՞ այդ կամ ոչ: 1 միավոր

9. **Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին**

Թաիլանդի տարբեր շրջաններում աղքատության գործոնների վերլուծություն: Պատկերում նշված է յուրաքանչյուր գործոնի մակարդակը, ինչը նշանակում է, որ որոշ գործոնների բարձր մակարդակն է հանգեցնում աղքատության, որոշ գործոնների՝ ցածր:



ա. Ո՞ր գործոնն է Թաիլանդի հյուսիսի բոլոր շրջանների աղքատության համար վճռորոշ (0.5 միավոր)

բ. Ո՞ր երկու տարածաշրջաններում է սխալ ապրելակերպը ամենաեական կերպով ազդում աղքատության վրա (յուր. 0.25 միավոր)

գ. Թաիլանդի ո՞ր շրջանում է աղքատության ամենացածր մակարդակը: Պատասխանը հիմնավորեք (1 միավոր)

10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները

ա. Ո՞ր լանդշաֆտներն են Հայաստանում առավել նպատակահարմար անտառավերականգնման աշխատանքների իրականացման համար: Իրական կյանքի ի՞նչ խնդրի են բխվում այդ տարածքներում անտառավերականգնման աշխատանքներ իրականացնել փորձելիս: 1միավոր
բ. Սմոգի տարատեսակներից մեկը կոչվում է հենց այդ քաղաքի անունով, սակայն այդ քաղաքում արդեն մի քանի տասնամյակ է սմոգ չի դիտվում: Սմոգի ո՞ր տեսակի մասին է խոսքը և ինչպե՞ս կարողացան այդ տարածքում լուծել սմոգերի խնդիրը: 1միավոր

11. Համապատասխանեցնել գյուղատնտեսական հողերի կառուցվածքը երկրներին (օր.՝ Ա-1)

2միավոր

